

ԱՐԵՎԱՆՈՅՍ ԱՐԱՐՏԵԱՆ

Հատը 3 մեծալիք Խզմիլի մէջ

ԿԸ ՀՐԵՏԵՐԵԿՈՐԻ ԶՈՐԵՔԵԱԲԹԻ ԵՒ ԶԵՐԵԹ ՕՐԵՐԸ

Դուրսերը 4 մեծալիք Հատը

Յ. Գ. ՍՎԵՏԵՐԵՆ

Համարատու — Տնօրէն

Տ Ա Ր Ե Գ Ի Ն Կ Ա Ն Խ Ի Կ

ԻԶՄԻՐ Օսմ. ոսկի 1
ԴՈՒՐԴՈՐ Մէճիտիյէ 6
ՕՏԱՐԵՐԿԻՐ Ֆրանք 25

Ծ Ա Ն Ո Ւ Յ Ա Գ Ի Ն

5 զրուշ տողը ՄԵԿ ԱՆԳԱՍ
2 զրուշ ԵՐԿՈՒ ԱՆԳԱՍ
60 փարա ԵՐԵԿ ԱՆԳԱՍ

Չ. Գ. ՊԱՆԹԱՔԱՐԵՆ

Հիմնադիր

Խ. ԴԵՐՉԱԿԱՆ, Կը տնօրինէ բաժանորդագրութեան եւ ծանուցման վե-
րաբերակ բոլոր գործերը: Ուսիյէ—Պէտէսիյէ

Որ եւ է գրութիւն, յօդուած կամ նամակ, որ ուղղակի ՏՆՕՐԻՆՈՒԹԵԱՆ
կը վերաբերի, տնօրէնին կը դրկուի: Սէվիլ խան Թիւ 17

ԻԶՄԻՐ

Զորքը շաբաթի, 14/26 Սեպտեմբեր

Ուրախ ենք տեսնելով որ վեր-
ջագէտ մեր գանգատներն ապար-
դիւն չմնացին, և պատ. Բաղա-
քապետութիւնը փութաց Պատ.
մարմնէն փողոցին շինութեան
սկիւղ: Այժմ կը մնայ Մէլիանէ—
Պողոցին փողոցին շինութեան
ձեռք զարկել, որ ոչ նուազ ա-
միսներէ ի վեր երեսի վրայ ձգ-
ուած է: Յայտնի է որ այդ փո-
ղոցին անցողարձն ամեն փողոցէ
աւելի է, և երբ այսօր կամ վա-
ղը անձրեւներն սկսին տեղալ, այդ
փողոցին անցքն ստուգապէս մե-
կաղբիւրի պիտի դառնայ: Հարկաւ
Բաղաքապետութիւնն ինչպէս ա-
սոր, նոյնպէս նորոգութեան կա-
րօտութիւն ունեցող ուրիշ բազ-
մաթիւ փողոցներու վիճակն ալ
ուշադրութեան անհրաժեշտ չլա-
նիր զանաք բարեկարգել և իր
պաշտօնավարութեան նշանակու-
թեան արժանի փայլ մը տալ,
փայլ տալով այնպիսի քաղաքի
մը փողոցներուն, որք իրօք բու-
լբուլին հակառակման գիրք մը
ունին քաղաքիս բարոյական կա-
ցութեան հետ:

Ուրիշ առթիւ թողով խօսիլ
թէ քաղաքատնիկներէ զատ կար-
գադրելու ալ ևս բաղմունքան
անկարգութիւններ ալ կան Իզմի-
րի փողոցներուն մէջ: Այժմ գոհ
կըլլանք շնորհակալութիւն յայտ-
նել Բաղաքապետութեան որ
գտնէ սկիզբ մը տուած եղաւ,
բարձի թողի մտադրած փողոցներն
յատակելով, իրաց դէշ վիճակը
դարմանելու:

Հայոց թաղին մէջ, դպրոցին
դրան գիմարի փողոցը գայթակ-
ղութեան և երկիւղի տեսարան
մը դարձած է քանի մը տառնէ
ի վեր: Ձենք դիտել թէ ոտա-
կանութիւնը տեղեկութիւն ստա-
ցած է կամ ոչ, բայց չտու հաւա-
նական է կարծել որ տեղեկու-
թիւն չպիտի ունենայ, ապա թէ
ոչ շարունակ չպիտի կրկնուէր
այդ տեսարանը, զոր հոս կը-
պատմենք իբր տեղեկութիւն առ-
որ անկ է:

Յոյն հասարակութեան վերա-
բերող անհատ մը Պ. Պ. . . քա-
նի մը շաբաթէ ի վեր ձեռքը
դանակով կամ դաշնովով մը
զինեալ, յիշեալ փողոցը կուգայ
քանի մը հոգիի բնակարանու-
թեամբ, և տան մը առջեւ կե-
նալով կը հրաւիրէ տան տէր կինը

դուրս ելլել, և սպառնալ տան
դուռը կտրել, տունն այրել և
կինն սպաննել և այլն:

Այլ և այլ անգամներ տան
պատուհանին ապակիներն ու
փեղկերը կտրելէ և յիշեալ քա-
պտանայիքները կրկնելէ ետեւ,
վերջագէտ կիրակի օր դարձին մը
բերելով ցորեկ տուն կը յան-
դգէնի ազատ համարձակ դուռը
բանալ և մինչեւ իսկ կտրել, և
ի բացակայութեան կնոջ, կիս
կարասիները խորտակել անխնայ,
միշտ պուտով և գոչելով թէ
պիտի սպաննէ կինը, և այլն և ին:

Այս եղելութեանց պատճառը
կը պատմուի, տակայն մենք լուռ
կ'անցնինք, աղբարարելով ոս-
տիկանութեան որ այս մասին
հարկ եղած քննութիւններն ք-
ննելով պատշաճ տնօրինէ:

Տեղւոյս յոյն և գաղղիացի
թերթերուն պատմածին նայե-
լով, քանի մը տառնէ ի վեր Բը-
ղէմալը ի կողմերը խումբ մը
զինեալ անձինք կը թափառին,
որք անցեալ շաբթու տաճիկ մը
բռնէր և տառնէն ու ձեռքի
հրացանն առէր են: Յետոյ այդի-
մը մօտեցելով պահապանը վեր-
ցուցէր են, չգիտցուի որքան
փրկանք պահանջուի:

Երկուշաբթիին երեքշաբթի
լուսնալու գիշեր, առաւօտեան
ժամը երկուքին, Զիւլօթաթիքա
բուռած տեղը գինետան մը մէջ
հրդեհ ծագելով մեծամեծ վե-
նաններ հասցուց: Կրակն այն-
քան սաստիկօրէն ճարակեցաւ, որ
անկարելի եղաւ մօտը գտնուող
փայտի և տախտակի մթերանոց-
ներն ազատել, թէ եւ քաղաք
գտնուող բոլոր շրջաններն օդ-
նութեան հասած էին գրեթէ,
որոց միայն նաեւ նաւահան-
գիստս գտնուող գաղղ. Վէնիւս
և Տիւրքի-Թուրքի մարտանաւոց
շրջաններն ալ:

Վնտուր մեծ է, զանազան ան-
ձինք զանազան գումարներ կ'են-
թաղեն, բայց միշտ ամենէ
հաւանականն այն է որ երեսուն
կամ քառասուն հազար ոսկի կը
հասնի:

Ամբողջ հասարակութիւնը դու-
րստիւ և շնորհակալութեամբ
կը խօսի գրեթէ, Դաղղիական
նաւերէն համուղ սպայից և նա-
ւասեաց ցուցած ջանքերուն,
որք առանց բնկրկելու այնքան
փառանքներու առջեւ ուղղով չափ
աշխատած են կրակին ճարակ-
ման դիմադրելու համար, չնա-

յելով, որ ամեն կէրպ աղտեղու-
թիւն և վտանգ կը սպառնար ի-
րենց:

Այրած շէնքերն են մէկ տուն,
ուր խանութ, մէկ գինետուն,
մէկ պանդոկ և բազմաթիւ մթե-
րանոցներ Բարափի փողոցին և
Սպարթալեան ֆերմանէ մէջ
տեղ:

Բէշ Հասան աւազակապետը
անձնատուր եղած ըլլալով Իզմիր
հասած է իր երկու բնկերօք:
Սակայն փոխանակ ազատ ձգուե-
լու, իրմէ առաջ անձնատուր ե-
ղող աւազակապետներու նման,
ի բանա դրուեցաւ մինչև որ իր
դէմ եղած քանի մը ծանր ու
հրդեհաւոր ամբաստանութեան մա-
սին քննութիւնները կատարուին:
Բէշ Հասան ամբաստանուած
է, բազմաթիւ յանցանքներէ
զատ, նաեւ չորս ստիկի ոսկի-
ներու յանցանք: Զորս գործած
է մին Բաղաքապետ, երկրորդը Դա-
սապալէն Բարապի ճամբուն վրայ
և միւս երկուքն ուրիշ զանազան
տեղեր:

Ռէֆորմ կըսէ թէ, կերելի որ
Բէշ Հասան ամեն կողմէ նեղուած
էր և չպիտի կրնար թրեթի և Պա-
լէմէնթի մէջ ապաստան մը գտ-
նել, Թորապալէն կայարանէն Ալ-
պանիացի մը իրենց լեղւով հար-
ցուցէր է իրեն թէ, ինչու անձ-
նատուր եղած էր: Բէշ Հասան
պատասխանէր է ինչ ընեմ,
տասնհինգ օրէ ի վեր չլրացայ
աչքս խփել:

Կըսուի թէ Իզմիր հասած ա-
տեն 200 ոսկի ունէր քովը, 130
ոսկի ալ իր բնկերներուն քով
գտնուէր են:

Պ. Բանայի, յունաց նոր Հէր-
թիւլէն հոս հասած է երկու-
շաբթի օրէ ի վեր, որ ներկայա-
ցումներ պիտի տայ Եւրոպայի
թատրոնին մէջ, ոչսօր և կիրա-
կի: Ծովեղբը հասած միջոցին,
թատրոնին առջեւ ահագին բազ-
մութիւն մը խոնած էր, այս նոր
Հէրթիւլէն զմայլելու համար:

Առտու և երկուշաբթի Եւրոպայի
առջեւ հետաքրքրներու խումբ
մը կրկնեայ միշտ զինք տեսնե-
լու անցաք բազմաթիւ: Բայց
ոյժերուն այս իշխանը չէր զիջա-
նէր երեւի ժողովրդեան մինչև
այս առաւօտ:

Կըլիափաքիին որ իր անձին
ամբաստանութիւն բնող պատ-
կերները աչքին զարնէին, դատ
պիտի բանա՞ր արդեօք այդ զըր-
պարտութիւնը նկարագրող պատ-
կերհաններու գէմ, որք հինգ-

հազար օխանոց թնդանօթներ
տուած են իրեն ուսերուն վրայ
և փշածե վագրեր և առիւծներ
բնկեցուցած իր ափերուն մէջ
և Սիմօնը կատուի չափ պղտիկ-
ցունելով՝ անուրբ դրած:

Ահ, բեղմնաւոր երեւոյթու-
թիւններ, որք Համբոսէն մինչև
մեր օրերը ելնէլ կ'առնեն գի-
ցարանական դարուց գաւառի-
բու գլուխին մէջ!!

Շաբթուան մեր յոյն պաշտո-
նակիցները Մադիտայէն նամակ-
ներ հրատարակած էին թէ,
տենդը ճարակած է նոյն քաղա-
քի մէջ, երեկ անկէ եկող ճան-
բորդներ այս լուրը կը տուէին,
և կըսեն որ գրեթէ իւրաքան-
չիւր տան մէջ մէկէն աւելի
տենդահար կայ:

Գ Օ Լ Է Ր Ս

Հետեւեալ հեռագիրն հասած
է տեղւոյ իշխանութեանց:

Ալէքսանտրիա, 22 Սեպ.
Ալէքսանտրիոյ մէջ գօլէրայի
ոչինչ դէպ պատահած է:
Ուրիշ տեղերէ լուր չկայ:

Ն Ե Ր Ք Ի Ն

Վաղը լրագիրը կըսէ թէ,
Սէլանիկէն եկող լուրերն հակա-
ռակն են: Այս կէտը կը մեկ-
նուի, կըսէ, այն մեծ կարեւոր-
ութիւնն զոր ստացած է այս դա-
ւաւը ներկայ պարագայից մէջ:
Նաեւ խնդիր կայ եղեր, այս լրոյ
համեմատ, թէ Ալիաթ Հիւարի
մէջ անկարգութիւններ պատա-
հէր են: Վաղը կը զարմանայ
թէ ինչու լուրիւն կը պահէ
Սէլանիկի պաշտօնական թերթն
այն կէտերուն վրայ՝ որք կրնան
հասարակայ կարծիքը լուսաւո-
րել, նոյն վիճակի իրաց փիճա-
կին նկատմամբ, և չէ հերքէր
սուտ լուրերը զորս դիտմամբ
կը տարածեն տէրութեան թշա-
միք:

Բոստանի բնդհանուր կառա-
վարիքը կը հեռագրէ ներքին գոր-
ծոց նախարարութեան, ծանու-
ցանելով նորա վեց ասպատակաց
նոր խումբի մը շնչումը որ երկան
եկած էր Բաճմալիլա գիւղակին
մօտ: Այս ասպատակներն հա-
լածուէր և պաշարուէր են, ոչնչ
գաւառը շրջող զօրաց կողմէ:

Չարագործներէն չորս հոգի
անձնատուր եղեր են կէս ժամ

կուռելէ ետեւ, միւս երկուքն
յաջողէր են փախչիլ թէ և վի-
րաւորեալ:

Փարաք Մատեմատիկ լրագիրը
կը հաստատէ թէ, վերջերս Սէլա-
նիկի և չրթուլայի մէջ տեղացող
հեղեղանման անձրեւներէն մեծա-
մեծ քանակներ ծաղկեցան պար-
տէշներու և դաշտաց մէջ:

Հ Ե Ռ Ա Գ Ի Ր

Բարիկ, 22 Սեպտեմբեր
Պ. Լալէթիլիս Դանուրի եւ-
րոպական յանձնաժողովը ան-
դամ կոչուեցաւ, Պ. Բամիլ Պա-
րէրի յաջորդելով, որ ուրիշ պաշ-
տօնի կոչուեցաւ:

Լոնտրա, 22 Սեպտ.
Պ. Լոնտրա Վէնսանի բնդուե-
լութեամբ, եղիպտական կառա-
վարութեան մօտ իր գանձուց
խորհրդականի պաշտօնին կոչու-
մը վերջնականապէս որոշուեցաւ:
Լոնտրա, 22 Սեպտ.

Հոնկ—Դոնկէն Սթանտորտի
կը հեռագրեն:

Վիեննայի վերաբերութեամբ,
Չինաստանի Դաղղիոյ կառավա-
րութեան առաջարկութեանց տը-
ւած պատասխանը յապաղեցաւ,
Բէքինի պալատան մէջ ծագած
յեղափոխութեան մը պատճա-
ռաւ, յեղափոխութիւն՝ որ յենած
էր ժողովրդական ցուցերու վրայ
և կրկնէր Թագուհի—Կայսրուհի-
ւոյ հրաժարումը ինպատ թիւուն
իշխանի, որ կայսեր հօրեղբայրն է:
Բարիկ, 22 Սեպտ.

Չինաց դեսպանատունը կհեր-
քէ Սթանտորտի հրատարակած
լուրը որ կը վերաբերի յեղափո-
խութեան մը, որ ծագած ըլլայ
Բէքինի կայսեր պալատան մէջ:
Ալէքս. 22 Սեպտ.

Անգլիական նաւատորմի հրա-
մանատարը Վոլայի ծովածոցն
հասած միջոցին Թրեքարի կղզի-
ին Արեւելեան կողմը, նոյն ծովա-
ծոցին մէջ ժայռերու խումբի մը
հանդիպեցաւ, որ ոչ մէկ աշ-
խարհացոյց տախտակի վրայ չէ
նշանակուած:

Նարբի, 23 Սեպտ.
Երեկ երկրաշարժի երկու տա-
տիկ ցնցումներ զգացուեցան Բա-
ղամիշիօղլայի մէջ (Բաքիա):

Վ Ե Ր Զ Ի Ն Ժ Ա Ս

Գաւառիս իշխանութեանց հասած
է այսօր հեռուեալ հեռագիրը:

Ալէքսանտրիա, 23 Սեպտ.
Ալէքսանտրիոյ մէջ գօլէրային մե-
ռաւ մէկ հոգի, Խոնէ և Քէնէ գիւ-
ղերուն մէջ տասն և հինգ հոգի:

Էրեւան 1883

չպիտի կրնան արդիւնաւորել աս-
պատակութեանց վերքերը բու-
ժել:

«Բ. Դուք պատճառ ունի
դո՞ւք բլլալու Անգլիայի սպային
կատարած դործերէն, որք իրա-
պէս յուզին իրենց արժանիքը և
կրնանք օրինակ մը առաջ բերել
գնդապետ Պ. Պլենթի ընթացքը
Սակայն մինչեւ որ այս ճիւղը
կատարելապէս չլիարկալի, ի-
րապէս գոհացուցիչ ոչ ինչ կա-
տարուած պիտի բլլայ, հոգ չէ,
թէ այդ վերակազմութեան գոր-
ծը Անգլիայի հետ, Գերմանա-
ցիներու կամ Թուրքերու յանձ-
նուի, բաւական է որ կատար-
եալ և ընդհանուր բլլայ: Հիմ-
նական այն է, որ զինուորու-
թիւնը վերակազմուի ամբողջովին
որ յայդ գործածուող մարդիկ
բաւականապէս վճարուին, որ-
պէսզի պարկեշտօրէն կատարեն
իրենց պարտաւորութիւնները,
որ կանխավճարները կանխաւոր
բլլան, և վարձատրութիւններն
անկողմնակալութեամբ արուին:
Ամբողջ խնդիրն այս չորս պայ-
մաններուն մէջ կը լուծուի, և
եթէ արդիւնաւոր զինուորութիւն
մը ունեցող կառավարութեանց
օրինակին հետեւեալ, պէտք չը-
պիտի զգացուէր օտարին օգնու-
նութիւնն ուղիւ այս ծառայու-
թեան վերակազմութեան հա-
մար:

Տաճկիները կատարելապէս կա-
րող են ինչ իրենց մասնաւոր
աշխատութիւնը, թէ՛ այս ճիւ-
ղին և թէ՛ այլ ծառայութեանց
ճիւղերու մէջ, բաւական է որ,
կեդրոնական կառավարութիւնը
յարգէ իր հաստատութիւնները,
ինքն՝ որ հիմն է այդ հաստա-
տութեանց, ուրիշ երկիրներու
մէջ: Օտաներուն փառութեան մէջ
ոչ թէ ճարտարութիւնը այլ մը-
նայնութիւնն է որ կը պահուի:

ՌՈՒՄԱՍՏԱՆ ԵՒ ԳԵՐՄԱՆԻԱ

Յիշատակաւոր լրագիրը կըսէ
թէ, Բէթէրգլուրիկի Կրայտանին
թերթը Ռուսոյ—ալմանիական
պատերազմի մը տարածայնու-
թեան վրայ կը խօսի, կը կարծէ
թէ Ռուսիոյ մէջ ոչ ոք կը փա-
փաքի պատերազմի, յետոյ Ալ-
մանիոյ գործողութիւնները կը-
քննէ, որք պատերազմի փախա-
կենթադրէն Ռուսիոյ հետ:

Ահաւասիկ թէ ինչ կըսէ.
«Ինչ չարժանիք, ինչ պատ-
ճառ կամ ինչ պէտք ունինք Ալ-
մանիոյ գէտ պատերազմ բնելու:
Ոչինչ, եւ ինչ պատճառ կրնայ
ուսնեալ Ալմանիոյ մեղ գէտ պա-
տերազմ բնելու: Նմանապէս ոչ-
ինչ, եթէ նորա շահերը Պետու-
թեան իրաւանց, կամ քաղաքա-
կան բարոյականութեան տեսա-
կէտով նկատուին: Այսու ամե-
նայնիւ շատ պատճառներ կը վե-
րագրեն Ալմանիոյ, որք Ռուսիոյ
հետ պատերազմի բնելու կը մը-
ղին, պատճառներ որք սա-
կայն ուղղութիւնն ու արդարու-
թիւնը կ'ապացուցանեն:

Կրայտանին կը կարծէ թէ, Ալ-
մանիոյ մէջ երեք տեսակ քաղա-
քական մարդիկ կան, որք Ռու-
սիոյ հետ պատերազմի կը փախա-
քին, Ռուս լրագիրը կը կարծէ
թէ այդ մարդիկ քաղաքական
խիտ յանգուգն վարդապետու-
թիւններ կը տածեն:

Կազէթ Նասիմալ իր կողմէ
սա պատասխանը կուտայ.

«Շատ երախտաւորտ պիտի
բլլայինք Կրայտանին, եթէ
յուզներ մեղ թէ ո՞ր կը գտնուին
այդ երեք տեսակ քաղաքական
մարդիկ որք պատերազմի կուգն
Ռուսիոյ դէմ: Մենք ևս պիտի
փախաքենք օգտ իլայդ հետա-
քրքրական գիտէն զոր կընէ
Կրայտանին, մենք ամենեւին այդ
կարծիքը չենք լած մեր ճան-
չաց Գերմանիոյ ոչ լրագիրներուն
մէջ և ոչ ալ քաղաքական մար-
դոց քով: Ալմանիա անհաշուելի
պատճառներ ունի խաղաղու-
թեամբ և լաւ գրադարութեամբ
ապրել Ռուսիոյ հետ: Միւրիտու-
նեւորդ գրամագլուխներ ունին
Գերմանացիք Ռուս ձեռնարկու-
թիւններու և արժէքներու մէջ.
Ռուսիոյ հետ մեր հաղորդակ-
ցութիւնը միշտ մեծ են, հակա-
ռակ իր մարտային թերի քաղա-
քականութեան: Եթէ այսօր
մենք յարթեինք Ռուսիոյ, ուրիշ
բան չհաճ չպիտի բլլայինք եւ
թէ ոչ անողոքելի թշնամի մը ևս
նաեւ գանձային անհուն կորուստ-
ներ և բոլորական խրտուսնե-
րով խռովեալ սահմանագլուխ մը
պիտի ունենայինք: Այսպիսի
պարագաներու մէջ, Ալմանիոյ
մը խելացի մարդը պատերազմի
կուգէ Ռուսիոյ դէմ: Այդ տե-
սակ քաղաքական մարդեր միմի-
այն Կրայտանինի երեւակայնու-
թեան մէջ գոյութիւն ունին:
Եթէ Ռուսիա, մեր իրենց գէտ
բնելու պատերազմին մէջ աւելի
մեծ վտանգներու տակ ինար,
ինչպէս կարելի պիտի բլլար որ
բուժէինք մեր կրկնի վնասները»:

Կազէթ Տը Լա Գրուա, ինչպէս
խորհրդածութիւնները նկատի
առնելով կը յաւելու.

«Ռուսի ըսն չենք կրնար բ-
նել, եթէ ոչ այդ լրագիրն կար-
ծիքն ընդունի: Պարզապէս բ-
նինք անցեալ օր, թէ Ալմանիոյ
մէջ ոչ ոք պատերազմի կուգէ Ռու-
սիոյ հետ: Գոհութեամբ և ու-
րախութեամբ կը տեսնենք, որ
Ռուսիոյ մէջ նմանապէս խաղա-
ղութիւն փախաքող ձայներ կը
չառնան:

ՅՐԱՆՍՍ, ԵՒ ՌՈՒՄԱՍՏԱՆ

Ռուս թերթ մը Շամպորի կամ-
սին մահուան համար՝ Ռուսիոյ
պալատան հնգօրեայ սուգին վը-
րայ խօսելով կը յաւելու. — Այս
լուրը հաճելի պիտի բլլայ ար-
դեօք այժմ Յիշատան կառա-
վարող փառաւորաններուն: Մեր
արքունիացի կողմէ եղած բոլոր
չահագլտական արտայայտու-
թիւնք, առ արքայական ընտա-
նիս Յիշատայի, խիտ շատ հա-
մակրութեամբ պիտի ընդունուին:
Գաղղիական Հանրապետութիւնը
Գերմանիոյ յետմէ՝ Յիշատայի
աղգեցութիւնը տկարացուց, երկ-
րորդական կարգի տէրութեան
մը կարեւորութիւնը տուաւ ա-
նոր և կատարելապէս կը համա-
պատասխանէ Պիզմար իշխանին
խորհրդոց և ծրագրաց: Հանրա-
պետութեան կառավարութիւնը
Ռուսիոյ նկատմամբ մերթ կա-
կածու և մերթ թշնամական բն-
թաց մը պահէ: Ժամանակին է
ուրեմն որ մենք ալ գլխաւոր ձը-
գենք: Յիշատայի միապետու-
թեան վերականգնումին մէջ բու-

լորովին չա՛հ ունի Ռուստոտան:
Զօրաւոր Յիշատան բարեկամ պի-
տի բլլայ մեղ, միապետական Յի-
շատան մեր բնական գաշնակի-
ցը պիտի բլլայ: Նոյն խի Յի-
շատայի մէջ Հանրապետութեան
դէմ առեւտրութեան այնքան մեծ
է՝ ժողովուրդին հայրենասիրա-
կան խաւերուն մէջ, որ եթէ
պատշաճապէս նեցուկ գտնէ բու-
տուգիւ փոփոխութիւն մը կը-
ներմուծէ այս երկրի մէջ:

Ի ՏԱԼԻԱ
ԵՒ ԵՌԵՎԱՆԻ ԴԱՇՆԱԿԱՅԻՆՈՒԹԻՒՆ

Մեր պաշտօնական շրջանակաց
մէջ, կըսէ Հոգովէն Ա սեպ. թիւ
հեռագիր մը, քանի մը դեր
մանական և աստղական լրա-
գիրներու կարծիքը կը հերքեն,
որք կ'ենթադրեն թէ Իտալիա
կեդրոնական Եւրոպայի տէրու-
թեանց գաշնակցութեան մէջ չէ՝
այն իրաւամբ, ինչ իրաւամբ որ
են Ալմանիան և Աւստրիան: Ի-
տալիա կառքին հիմնարար ա-
նիւք չէ երբեք, և արքայական
կառավարութիւնը՝ աղգին ար-
ժանապատուութիւնը վնասելու
բնութիւնն ունեցող պարտաւո-
րութիւններ չ'պայմանագրէր:

Գաշնակցութիւնը հաստատ եւ-
ղանակաւ կը պահպանէ երեք
տէրութեանց շահերը, և թէ-
պէտ, իր բնութեամբ, խաղա-
ղութեան գաշնակցութիւն մ'ըլ-
նայ, սակայն կանխատեսած է
նաեւ պատերազմի պատահարը,
և ի հարկին փոխարքած պաշա-
պանութիւն կը հաստատէ: Գաշ-
նակցութեան կնքութիւնն առաջ
երեք տէրութեանց ներկայիչը
որոշակի գծերին այն պարագա-
ները՝ որք կրնան պայմանագը-
րողներուն իւրաքանչիւրին հա-
մար քաղուս պէլի (պատճառ
պատգամի) մը տալ, և ամե-
նակարեալ համաձայնութիւնը կը
տիրէ այս մասին երեք տէրու-
թեանց մէջ: Սխալ է այն են-
թադրութիւնը թէ Ռուսմանիա
Ալմանիոյ և Աւստրիոյ մէջ միեւ-
նոյն յարաբերութիւններով մը-
տած է իտալիա, այս գաշնա-
կցութեան մէջ իրապէս կը վա-
յելէ միւս երկու տէրութեանց
իրաւունքները:

Բերուէլերանձա լրագիրը այն
խնդրոյ վրայ խօսելով, կարծիք
կը յայտնէ թէ, երբ Պիզմարը
իշխանը ժամանակին եկած կար-
ծէ, Ալմանիա չպիտի գրգռէ
պատերազմը, այլ ուրիշներու
յայտարարել պիտի տայ: Գաշ-
նակցութեան մէջ չկայ յօդուած
մը, որ արամագրէ թէ Իտալիա՝
իրմէ ուղուած ձեռնառութեան
փոխարէն վարձ մը պիտի ստա-
նայ: Զկայ ամենեւին խօստում
կամ յոյս մը, թէ Աւստրիա պի-
տի տալ մեղ իր վարձ՝ Արեւ-
ելքի մէջ իր ծրագիրներուն ի-
րախանցման համար մեր իրեն
ընելիք ձեռնառութեան փոխա-
րէն:

Դիցուք թէ պատերազմը ծա-
գի Ալմանիոյ և Աւստրիոյ մէջ
մէկ կողմէ, և Յիշատայի մէջ
միւս կողմէ: Ստիպուած պիտի
բլլանք մինչև գաշնակցութեան
տեւորութիւնը, Ալմանիոյ և Ա-
ւստրիոյ հետեւելու: Այս
Դիցուք թէ Ալմանիա և Աւստ-

րիա յաղթող հանդիսանան, և
Յիշատայի հոգին նոր դատաւ մը
եւս գրուեն, Պիզմարը օրինա-
կի համար: Մենք ոչինչ պիտի
ունենանք արդեօք: Այս, պի-
տի կրնայինք, եթէ ուղէինք
առնուլ Նիւր, Գորտիքան, վեր-
ջապէս բան մը՝ որ կարենայ թըշ-
նամութիւնը հարկաւոր և յաւի-
տենական բնել Իտալիոյ և Յի-
շատայի մէջտեղ: Աւելի զօրա-
ւոր պիտի բլլայինք արդեօք
մենք: Ամենակարող գործող
Ալմանիոյ և Աւստրիոյ տէրու-
թեանց առջեւ՝ մեր տէրութիւնը
պիտի նուազէր և պիտի կորսն-
ցունէինք բոլոր աղատ գործու-
ղութիւնն արտաքին քաղաքա-
կանութեան մէջ:

Վերջապէս գաշնակցութիւն մը
կնքելիք որպէս հետեւանքները
չորսեալ փախաքելի է: Լաւ է
որ գաշնակցութիւնը բան մը չը-
նէր, Խաղաղութիւնը չպիտի վեր-
գոյլէր վնասել խնդրութիւն մը
է երեւակայն, թէ Յիշատան
կուգէ մեր վրայ յարձակել կամ
Սարաշինան գրաւել: Այսու հան-
գեւծ եթէ գաշնակցութիւնը լը-
րանայ առանց զայն ի գործ դը-
նելու առիթ ունենալու՝ յայտնի
է որ այս արտաքին քաղաքա-
կանութիւնը պէտք է բարեփո-
խուի և սրբագրուի:

ՌՈՒՄԱՆԻԱ

և Աւստրիա—ալմանիական դաշնակցութիւն

Նայէ—Յիշատի—Բրէսէ լրագիրը
կըսէ. — «Պիզմարին կ'ապահովեն
մեղ մեր տեղեկութեան ստու-
գութիւնը, տեղեկութիւն՝ սրով
կ'իմացուէր թէ Պ. Պիզմարի
Պիզմարը իշխանի հետ ի Կա-
թէն տեսակցութիւնը հիմնա-
պէս նպատակած է Ռուսմանիոյ՝
կեդրոնական Եւրոպայի տէրու-
թեանց գաշնակցութեան մէջ
մաներու գործին: Մեր Պիզմարի
թղթակցը կը գրէ թէ, ստույգ
պարկեշտ կը հաստատեն՝ որ Ալ-
մանիոյ և Ռուսմանիոյ համաձայ-
նութիւնը կրնայ վերջնականա-
պէս սրբուած նկատուիլ: Իրաւ-
է որ կարգադրութիւնը գրի
առնուած չեն թուի, բայց գո-
նէ բերանացի բարոյացութիւնը
վերջացուցած են Եւրոպական
քաղաքականութեան բոլոր պա-
տահանութիւնը, ուր խնդիր
է գտնալ թէ Ռուսմանիա ինչ
ընթացք պիտի բռնէ: Ինչպէս որ
Ժամանակն հարկաւոր եղաւ Ի-
տալիոյ համար կանխապէս հա-
մաձայնել, Ալմանիոյ միանալէ ա-
ռաջ, Աւստրիա—Հունգարիոյ հետ,
նայնպէս Ռուսմանիա կը պարտա-
ւորէր նախ քաղաքականապէս
խաղաղութիւնը բնել Աւստրիոյ
հետ՝ Ալմանիոյ տէրութեան մի-
անալէ առաջ: »

Ի ՌՈՒՄԱՆԻԱ ԵՒ ՏԱԼԻԱ

Տէլլե-Նիւուելի թղթակցը կը-
հեռագրէ Վիլմանայէն. «Պետու-
թէշթէն կ'իմանամ թէ, Սալէի
և Ումիէի մէջ գտնուող երկր-
ներու մէջ գիւղացիներու կող-
մանէ յեղափոխութիւն մը ծա-
գելու վրայ է: Երկաթուղայ կա-
յարանաց պաշտօնայք անստու-
րագիր նամակներ ստացած են,
ընելով թէ երկաթուղայ գիծերը
մտներս պիտի բանդուին: Սի-
սէքի գիծն արդէն սպառնացը-

ւած է գիւղացիներու կողմէ,
որք հունգարական լեզուով գըր-
ուած բոլոր պաշտօնական արձա-
նագրութիւններն աւերելին եր-
կու ձիւնոր վաշտ հրաման ըն-
դունելին աննց վրայ երթալու,
բայց կը կարծուի թէ աւելի բաղ-
մալիւ զօրքերու կարօտ է ա-
պրտամիութիւնը զսպելու հա-
մար: »

Նուվէլ-Բրէսէ—Իպր լրագրոյ ար-
ուած լրագրութեան նախելով, մեծ
խռովութիւններ ծագել են: Սի-
սէքի և Նուվի մէջ գտնուող եր-
կաթուղին զօրքեր կըստանան:
Յեղափոխական շարժումը ոչ մի-
այն հունգարացոց, այլ նաեւ
խրտալմաներու գէտ ալ ուղղուած
է: Խրտալմաներու մէջ հանդար-
տութիւնը խռոված չէ, բայց կա-
ցութիւնը մի և նոյնն է և մտաց
գրգռումը ծայրայեղ է:

Զօրաց ներկայութիւնն է մի-
այն որ ապստամբները կը զսպէ:
Պ. թիշայի Խրտալմ երեւել-
եաց հետ բրած խորհրդակցու-
թիւնը գրական արդիւնք մը չու-
նեցաւ:

Խրտալմներն այն կարծիքը կը
տածեն թէ, հունգարական գի-
նագրողներու հեռացումն ամեն
գործողութեան առաջ հարկաւոր
է:

Պ. թիշա կը յայտարարէ իր
կողմէն թէ, ամեն բանէ առաջ
պէտք է կարգը վերահաստա-
տել և երկրը խաղաղել, և թէ
զինագրողներու խնդիրը կրնայ
յետոյ կարգադրուիլ խորհրդա-
րանական ճանքով:

ՄԱՐՊՈՐԻ ԿՈՄՍԻՆ ԿՏԱԿԸ

Վիլմանայէն Ֆիկարո լրագրին
զրկուած նամակ մը, հետեւեալ
պարագաները կուտայ Շամպորի
կամին կտակին վրայ.

Կտակն իր ամբողջութեամբ չը-
պիտի հրատարակուի, կըսէ յիշ-
եալ նամակը, այլ իւրաքանչիւր
բաժին ունեցողի պիտի ծանու-
ցուի իրեն վերաբերեալ ժա-
ռանգութիւնը: Կտակը գրուած
է յունիս 4 թուականով և ամ-
բողջովին գրուած է Շամպորի
կամին ձեռք: Ամենեւին քա-
ղաքական բան մը չըկայ մէջը,
և բացարձակապէս բուռն կը
պահէ գահուն յաջորդութեան
վրայ, Սպանիոյ իշխանը չեն
գրուած կտակին մէջ:

Կտակն այսպէս կ'սկսի.

«Կը մեռնիմ ըրիտանուայ հա-
ւատքով և հոգովայեցի կաթու-
ղիկ: Երբեք մէկու մը գէտ ա-
տելութիւն չեմ գրաւ, կը նե-
րեմ ամեն աննց՝ որք ինձի գէ-
շութիւնը բլլին, և կաղաչեմ նե-
րել ինձ ամեն աննց՝ որնոց որ
և է անիրաւութիւն մը կրնամ բ-
րած բլլալ:

«Կաղթեմ ամենակարողն Աս-
տուծոյ հոգւոյ վերկութեան հա-
մար: »

Յետոյ կուգան իշխանին շաք-
ժուն և անչարժ գոյից հարքս
տուլեան արամագրութիւնները:

Ահաւաստի, ըստ ֆիկարայի, այդ տրամադրութեանց պարունակութիւնը:

Շարժուն գոյքը գրեթէ ուժ միլիոն ֆիլիպին է, այսինքն քրտան միլիոն ֆրանք, որ զանազան արժէթուղիներէ կը բաղկանայ:

Անշարժ գոյքերն են Շամպուրի դղեակը, Սէնթ-Յիւպերի երկիրը՝ Պանթի մէջ, Կալիֆի և Պրոշտորֆի մէջ երկիր մը: Յետոյ Պրիւնէի փոքրիկ դղեակը՝ Սթիւրի մէջ, ուր մեռաւ Պէրիի դքսուհին: Շամպուրի կոմսուհին մինչեւ ցմահ ասոնց հասոյթը պիտի ստանայ: Իր մահունէ ետեւ, կոմսին ստացուածքը պիտի բաժնուի իր երկու քեռորդուոյ, այսինքն Բարմայի դուքսին և սորա եղբայր Պարտի կոմսին:

Ժառանգութեան բաժանումները եօթն են, և հետեւեալ կերպով.

Թոքանայի մեծ դքսուհին Ալիս՝ պիտի ստանայ հինգ հարիւր հազար ֆրանք: Տօն Բարլուի կին, Մարգարիտ դքսուհին պիտի ստանայ նմանապէս հինգ հարիւր հազար ֆրանք: Լիւնի մէջ կրօնական հաստատութեան համար չորս հարիւր հազար ֆրանք: Մի և նոյն դուստրը կը տակաւն է Վատիկանի: Հարիւր հազար ֆր. Բարիլի աղքատաց համար: Քսան հազար ֆր. իւր մեռած քաղաքին համար: Նաեւ բաւական մեծ գումարներ կտակած է իր սպասաւորաց և իր հոգւոյն պատարագ ըլլալու համար:

ՎԻԵՆՆԱՅԻ ԱՋԱՍՏՈՒՆ ԵՐԿՈՒ ՀԱՐԻՐԵՐՈՐԻ ՏԱՐԵՒԱՐԸ

Վիեննայի Տաճկաց պաշտօնումն ազատուելուն երկու հարիւրերորդ տարեդարձին տօնախմբութիւնը ըսկան անցեալ շաբթուն վերջերը: Սեպտ 10, Սկիփտայի Վենետիկական ներու եկեղեցւոյ մէջ երգեցողութիւններ կատարուեցան, ուր ներկայ էր քաղաքապետը, որ յանուն Վիեննա քաղաքին դափնեայ պսակ մը գետնեց, քաղաքը պաշտպանող զինուորի պատուոյն համար կանգնուած բեմին վրայ: Այդ մարդն էր Փրէմարհէմպերգի և Փրէմպերգի կոմսը՝ որ քաղաքապետ էր 1883ին: Հետեւեալ օրը տօնախմբութիւն կար Փրաթէրի և Քահլէնպերկի մէջ: 12ին Սէնթ-Յիւպերի ակնուանիտ եկեղեցւոյ մէջ, «Ջընդ Աստուած փառաբանեմք» մաղթանքէն ետեւ կայսեր ներկայութեան տեղի ունեցաւ նոր քաղաքապետական պալատին բացման տօնախմբութիւնը: Արարողութեանց միջոցին քաղաքապետ և իր երկու փոխանորդը, առաջին անգամ ըլլալով, ոսկի շղթաներ կրեցին, զորս նուիրած էին իրենց Վիեննայի քաղաքացիք իր նշան իրենց պաշտօնին: Բազմաթիւ օտարականներ գտնուած էին Վիեննա այս տօնախմբութեանց համար: Վիեննայի բոլորիսկան գաղթականութիւնը թալլիուի մէ կատարեց այս տարեդարձը, ուր 1883ին բոլորիսկի օժանդակ զօրքերը բանակին միացան ընդդէմ Տաճկաց:

Վիեննայի Չայթուսկ լրագրին տեղեկութեանց համեմատ, Ալմանիոյ բանակին մետասաներորդ մարմնոյն զինավորմաններուն ներկայ պիտի գլուխուին հետեւեալ իշխանական անձինք: Կիլիմ կայսրն և Ալմանիոյ կայսերազուն իշխանը, Կիլիմ, Ֆրէտէրիք Շարլ, և Ալպերթ իշխանները:

Սաբսի, Սպանիոյ և Սերպիոյ թագաւորները, Կալէսի իշխանը, Բորթուկալի արքայական իշխանը, Լալմայուրիի, Քոննոթի և Քէմպրիի դուքսերը:

Սաբսի-Վէյմարի, Հէսի մեծ դուքսերը:

Սաբսի դաճաժառանգ իշխանը, Սէքսանտր, Կիլիմ և Հանրի իշխանները, վերջապէս Վալտէրի Քիմնի իշխանը:

Նիակարայի ջրվեժին մէջ հետաքրքրական փորձ մը եղած է, դիտնալու համար թէ, կարելի է՞ր արդեօք նաւարկութեամբ անցնիլ յորձանքէն՝ ուր խղիւղեցաւ հոգեակոր լուղորդ Վէյս: Ուտի 23 օրը երկայնութիւն և 18 օրը լայնութիւն ունեցող նաւ մը ձգեցին, որ տանտեօթ վայրկեանի մէջ երկու հազարամիլ. բէն աւելի ճանաչալու, հաստատակէս գետին մերձիկեան եղբրց վրայ բռնելով ինքզինքը: Յորձանքին մէջ մտնելով նաւը դարձաւ իր ետեւի կողմին վրայ և ուղղեցաւ դէպի Քանտեան եղբրը: Տազնապալի վայր, կեան մէջ այս: Քանի մը մէկը աւելի հեռուն նաւն սկսաւ յարաբար դառնալ ինքն իր վրայ քառորդ ժամու չափ: Յետոյ մերձեցաւ եղբրը, բայց իսկոյն ետ մղուելով կրկին յորձանաց մէջ ինկաւ, որ նոյնպէս մը ղեց զինքն այն կէտին վրայ ուր դեան իր բնական և հանդարտ ընթացքը կառնէ, որով նաւը կրցաւ անցնիլ անդունդէն առանց վնասուելու: Յիսուհազար հոգի ներկայ էին այս փորձին, որուն հետեւութիւնը կապացուցանէ թէ այսուհետեւ նաւերը պիտի կրնան անցնիլ Նիակարայի ամենէ շատ վրդովեալ մասերուն վրայէն:

ԵՐԿԱՐ ԱՊՐԵԼՈՒ ԿԵՐՊԸ

Գաղղիերէն թերթի մը մէջ հետեւեալ հետաքրքրական հատուածը կը կարդանք. «Հնօրեայ բժիշկ մը որ մօտերս մեռաւ 107 տարեկան հասակին, և որ խօստացած էր ճանչցունել իր երկայնակեցութեան գաղտնիքը, կրէ թէ երկար ապրելու համար պէտք է որ անկողինը տեղադրուած ըլլայ Հիւսիսի և Հարաւի մէջտեղ, այսինքն երկու գունդին մագնիսական մեծ հաստիներուն ուղղութեամբ: Եւ ստուգելու գիտողութիւն եղաւ, որ երկարական հասումը գիշերն

աւելի զօրուոր է Հիւսիսակողման ուղղութեան մէջ քան ցարեկը:

Խիստ յաճախ վարձուած՝ այս հոսման նպատակաւ արգելիքներն երբ նկատուելի են առնեալ, յայտնի է որ դիւինիս դէպի հիւսիս և կամ քիչ մը դէպի արեւելակողմ դարձուցած պառկելով (երկարական հասումին մէջտեղ) խիստ հանգիստ կը քնանանք:

Մարդու մարմնոյն վրայ երկարական հասումին ազդեցութիւնը երկար տունէ ի վեր հաստատուած է, և 1763 ին, Կէթիկի մէջ տօքթօր Բլարիկ ակուայի ցաւերը կը բուժէր հիւսսն դէն երեսը դէպի հիւսիս դարձունելով և մագնիսի կամ մագնիսական զօրութիւն ունեցող երկաթեայ ձողի մը հարաւային առանցքով ակունքերուն դպչելով:

ԾԱՆՈՒՅՈՒՄ

Յ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Պ. Յ. Պերպերեան պատիւուն ծանուցանել հասարակութեան որ թէ տախտակի և թէ մետաղներու վրայ ամեն տեսակ ՓՈՐՊԵՐԵԱՆԹԻԻՆՆԵՐ բնութեւ պատրաստ է աժան գիններով: Կը ապէ նաեւ ԱՅՅԵՏՈՄՍՍԵՐ, հարսանեաց, յուղարկաւորութեան հանդէսի ևն ՀՐԱՒԻՐԱԳՐԵՐ, թէ մեծ և թէ փոքր ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ, ԸՆԿԱՆԱԳԻՐ, ՓՈՒՄԱՆԱԳԻՐ, նամակի վԵՐՆԱԳԻՐ ևն ևն:

Կը շինէ նաեւ պատերու վրայ զանազան նկարներ, և խանութներու վրայ կախուած նշանաբաններ և ապակիներու վրայ զանազան տեսակ գրերով ունեւներ եւ այլն:

Պէտք ունեցողը կրնայ գիտնիլ ՍԼՎԻԻԻԻ, վերի յարկ թիւ 17 Լրագրոյն ունեւակը:

LONDON & LANCASHIRE

ԴՐԱՄԱԳԻՈՒՄ

ԱՆԳՂԻԱԿԱՆ ՈՍԿԻ

1.852,000

ԴՐԱՄԱԳ. ՊԱՀԵՍԻ

ԱՆԳՂ. ՈՍԿԻ

232,918

ԼՈՆՏՈՆ ԵՒ ԼԱՆԿԱՍՀԻՐ

ՀՐԴԵՀԻ

ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Սոյն բնկերութիւնը որ հաստատուած է 1862 ին կապահովէ միմիայն հրդեհի վտանգներու դէմ:

Հասարակաց շէնքերու համար 0/0 20 զեղչ կը ըլլայ: Ընդհանուր գործակալը և փոխանորդը Ջոն Էմիլիոյ և Վիկտորի միւս քաղաքացի համար:

ՖՐԱՆԿԱ և ՋԱՄԵՔՕՓՈՒՈ
FRANGHA et ZAMACPOULO

Գրասենեակ Եւոլման օղլու խան թիւ 3 Ալի-Եօրիկի մօտ: Ապահովուիլ ուղղը կրնայ գիտնիլ նաեւ Բուպիէ Պետեմիթէն Թ. Դերձակեան եղբայր գրասենեակը:

ԱՌ ԶԵՈՆ ԼՈՒՐԵՐ

Տիկին Մարան խիստ հետաքրքրական վէպ մը կարդալու վրայ է Սոսու և իրիկուն անկողնոյ մէջ քանի մը ժամ կըլցոյնէ անոր ընթերցումը: Սակայն, խնդիրն այն է որ Մարանի քունը չտանի երբ պատկած տան լոյս կենայ քովը Ռոսի ակիցուր:

Նոյն դասեալով:
— Վերջապէս, կնիկ շոքի մը որ քնանում, լոյսը քունը կը փոխանէ:
— Օ՛հ, ձգէ՛ կ'աղաչեմ՝ երկու երես տակաւին, և անգամ զոգորդեմ:
— Ա՛յ, եթէ կուզես ասոր երես կարգաց տակաւին, բայց լոյսը անցուր:

	քաժիւ	Թարեֆա	ողջ
Արժաթ մէճիսիէ	23,15	25,05	20
Ոսկի օսմանեան	125,	135,26	107,99
Սթէրլին	137,	148,25	118,36
Ոսկի գաղղիական	109,50	118,49	94,60
Վեցնոյ	101		
Հինգնոյ	—		
Մէթալիք	63,		
Թղթագրամ	1000		

ՊԱՇՏՈՆԱՏՈՒՆԻՔ ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ

ՀՐԴԵՀԻ
QUEEN
INSURANCE COMPANY
ԹԱՂՈՒՀԻ
ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
ԼԻՎԵՐՔՈՒԼԻ ԵՒ ԼՈՆՏՈՆԻ

Գրամադրութիւն 2,000,000 Անգլ. ոսկի

Սոյն բնկերութիւնը փոքր Ասիոյ գլխաւոր քաղաքացի Բարամանիոյ Սուրիայի, Արշիպեղեան կղզեաց, Բուսիլի և Յունաստանի մէջ ճիւղեր հաստատած են:

Կեդրոնական Պաշտօնատուն

Փրանկաց թաղ Բոնիօրուլոյի ֆերմանէն վերի յարկը թիւ 2 և 3

Ընդհանուր գործակալ
ՋՕՆ Ա. Ա. ԿՈՒ

ԳՐԱՄԱՆԵԱԿ

Բէշտիմալէրայ պաշի Սէֆերեան խան վերի յարկը թիւ 3 մանրամասն տեղեկութեանց համար պէտք է գիտնիլ բնկերութեան փոխ գործակալ Յ. Կ. Հիւսիսի վերջոյնեալ խանին քով Եսայեաններուն մագաղան:

THE

COMMERCIAL UNION

ԳՕՄԵՐՍԻԱԼ ԻՒՆԻՕՆ

ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՀՐԴԵՀԻ ԴԵՄ

ԴՐԱՄԱԳԻՈՒՄ 2,500,000 ՍԹԵՐԼԻՆ ՈՍԿԻ

Այս Բնկերութիւնը հրդեհի դէմ՝ կ'ապահովէ Իզմիրի և շրջակայ գիւղերուն մէջ, շէնքեր, կահկարասիներ, ապրանքներ, կալուածներ, գործարաններ և այլն:

ԴՕՄԵՐՍԻԱԼ ԻՒՆԻՕՆԸ՝ միւս բոլոր բնկերութեանց տուած առատութիւնները կուտայ իրեն ապահովութեան:

Վճարելիք տուրքերը, մասնաւոր պայմանագրութիւնով մը, այս քաղաքս գտնուող միւս անգլիական Բնկերութեանց վճարած տուրքերուն հաւասար են:

Վարը օտարազորները արտօնութիւն ունին այստեղ՝ Ընկերութեան դէմ՝ որեւէ գանգատի գահութիւն տալու:

ԳՐԱՄԱՆԵԱԿ

RALPH et JOHN GOUT

ՌԱԼՖ և ՋՕՆ ԿՈՒ